

**ՀՀ ներքին գործերի նախարարության
Ֆինանսաբյուջետային վարչության պետ
ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության հաշվարկային բաժնի
փորձագետ Նունե Էդիկի Ռոստոմյանի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ
(10.04.2025-10.07.2025թթ)

2025 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իմ կողմից ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Սպիտակի բաժնի աշխատանքների կատարման վայրը ք. Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 1/1 աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ հաշվարկների անալիտիկ հաշվառումը, այդ հաշվարկների շարժի և մնացորդների ամփոփման և մեմորյալ օրդերների կազմումը.
2. Իրականացրել եմ ծառայողների աշխատավարձերի հաշվարկման անհատական քարտերը թղթային և էլեկտրոնային եղանակով, անհրաժեշտության դեպքում տրամադրել միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ, ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել դրամական վարձատրության վկայականներ, կատարել վերջնահաշվարկներ:
3. Կազմել եմ աշխատավարձերի, պարգևատրումների, գործուղումների հաշվարկները, ինչպես նաև տեղեկագրեր և վճարման ցուցակներ:
4. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրերը և ներկայացրել ֆինանսավորման ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:
5. Իրականացրել եմ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված որոշումների հիման վրա ծառայողների աշխատավարձից պահվող գումարների հաշվարկման գործընթացը:
6. Իրականացրել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Սպիտակի բաժնի ծառայողների սոցիալական փաթեթի ամենամսյա գումարների հաշվարկումը, վճարացուցակների պատրաստումը և վճարումների գրանցումը:
7. Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականները, շրջաբերականների պահանջները, հետևել ցուցումներին, պարզաբանումներին, նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:
8. Պատրաստել եմ գրության նախագծեր՝ ի պատասխան նախկին աշխատակիցների աշխատավարձերի տեղեկանքների տրամադրում և այլ գերատեսչություններից ստացված նամակների:


Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՖԲՎ հաշվարկային
բաժնի փորձագետ




Նունե Ռոստոմյան

„ 01 „ օգոստոսի .2025թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ 

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ



Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

„ 01 „ օգոստոսի 2025 թիվ